

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի _____ N _____-Ա

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6.1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1072-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Թույլատրել «Քվանտ» վարժարանին 2017-2018 ուսումնական տարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-12-րդ դասարաններում իրականացնել «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրն անգլերեն լեզվով՝ 3 տարի ժամկետով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1072-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1072-Ն որոշմամբ հաստատվել է ուսումնական հաստատությանն օտար լեզվով կրթություն կազմակերպելու թույլտվություն տալու կարգը, որին համապատասխան ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի N 1335-Ա որոշմամբ «Քվանտ» վարժարանին թույլատրվել է 2011-2012 ուսումնական տարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-12-րդ դասարաններում իրականացնել Միջազգային բակալավրիատի «Դիպլոմա» ծրագիրն անգլերեն լեզվով: Անհրաժեշտություն է առաջացել երկարաձգելու նշված թույլտվության ժամկետը:

3. Ակնկալվող արդյունքը

Ակնկալվում է, որ վարժարանը շարունակաբար իրականացնելով ՄԲ Դիպլոմային ծրագիրը, կապահովի միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող կրթություն, ինչը մի կողմից դրական ազդեցություն կունենա հանրապետությունում կրթության ընդհանուր որակի բարձրացման վրա, կնպաստի աշխարհում հայկական կրթական համակարգի հեղինակության հետագա աճին, իսկ մյուս կողմից հնարավորություն կընձեռի ՄԲ Դիպլոմային ծրագրի շրջանավարտներին ընդունվելով միջազգային բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ, դառնալ իրենց ընտրած բնագավառների որակյալ մաստագետներ՝ դրանով իսկ նպաստ բերելով երկրի առաջընթացին:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քվանտ» վարժարանին օտար լեզվով կրթություն կազմակերպելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քվանտ» վարժարանին օտար լեզվով կրթություն կազմակերպելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ պետական բյուջեում եկամուտների ու ծախսերի էական ավելացում կամ նվազում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**««ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ
ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրությանստացման ամսաթիվը, գրությանհամարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	1. Նախագծի նախաբանում «1072» թվից հետո լրացնել «-Ն» տառը 2. Նախագծի 2-րդ կետի «դիպլոմա» բառը փոխարինել «դիպլոմային» բառով:	1. Ընդունվել է 2. Չի ընդունվել	1. Կատարվել է համապատասխան փոփոխություն: 2. Քանի որ «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագրի անվանումն է:
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չկան		